ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԱԿՑԻԱ «ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՅԻ ՔՈՒՅՐԵՐ» ՄԱՆԿԱՏԱՆ ՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

22.11.2019 11:11

Շարունակելով մեր ավանդույթը՝ ցանկանում ենք 2019թ. դեկտեմբերի 23-ին՝ ժամը 17:00-ին, այցելել Երևանում «Մայր Թերեզայի քույրեր» միսիոներների բարեգործական կազմակերպության մանկատուն, որտեղ խնամքի տակ են գտնվում ծանր հիվանդ երեխաներ, որոնցից ծնողները հրաժարվել են: Մանկատան երեխաներին օգնություն տրամադրելու, ինչպես նաև նրանց անձամբ այցելելու ցանկություն ունեցող փաստաբանները կարող են infoadvocatesra@gmail.com էլ. հասցեին նամակ ուղարկել կամ անհրաժեշտ իրը ստացականով հանձնել Փաստաբանների պալատի ընդունարանի պատասխանատուին:

Մանկատան երեխաներին անհրաժեշտ են հետևյալ իրերը՝ (անսահմանափակ քանակի)

- լոգանքի պարագաներ (գել, օճառ...)

- Similac 2 կաթնային խառնուրդ

- BEBI շիլաներ (каша)

- Huggies, Libero, Puffies տակդիրներ (ցանկացած չափերի)

- թաց անձեռոցիկներ

- շոկոլադե կոնֆետներ Kinder (միայն բատոնչիկները, քանի որ երեխաները միայն դա են կարողանում հարմար բռնել)

-խաղալիքներ (ալերգիկ երևույթները բացառելու նպատակով փափուկ խաղալիքներ չեն ընդունվում):

-տոնածառի խաղալիքներ

Մանկատունը օգնում է նաև անապահով ընտանիքներին, ուստի կարող եք ուղարկել նաև հետևյալ իրերը՝

-աթոռակ, մանեժ, քայլակ (կարող է լինել օգտագործված)

-մանկական հագուստ

Մանկատունը գտնվում է Նորք-Մարաշ վարչական շրջանում:

Փաստաբանների պալատից կամավորների խումբը

մեկնելու է 2019 թ. դեկտեմբերի 23-ին՝ ժամը16:30-ին: Եթե ցանկանում եք ներկա գտնվել, խնդրում ենք նախապես տեղեկացնել:

Հարգանքով՝

ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })